Լոռու մարզպետ Ա. Խաչատրյանին

Դիմող՝ Անուշ Մարտիրոսյան

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ,

«Դիմակայունություն Covid-19-ին Հայաստանում և Վրաստանում ու արձագանք

Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը (CoNaKa)» ծրագրի համակարգող

**Տեղեկություն ստանալու հարցում**

Հարգելի պրն. Խաչատրյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել թվային և առկայության դեպքում կոնտակտային տվյալներ՝ Լոռու մարզի 44-օրյա Արցախյան պատերազմին մասնակից և ընթացքում վիրավորում ստացած անձանց, և/կամ այս պահին առողջական խնդիր, հաշմանդամություն ունեցող, դեղորայքային աջակցության կարիք ունեցող անձանց մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Անուն Ազգանուն՝ Անուշ Մարտիրոսյան

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝ 30.05.2023